ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 774-Ա « 02 » հուլիսի 2025թ.

«ՁԱՅՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎՈԿԱԼ-ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետով.

1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի N 5100-Ա որոշման N 2 հավելվածը՝ 2025 թվականի հուլիսի 14-ից մինչև օգոստոսի 5-ը ներառյալ, «Ձայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոց» ՀՈԱԿ-ում իրականացնել 2022-2024 թվականների ֆինանսական աուդիտ:

2. «Ձայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոց» ՀՈԱԿ-ում աուդիտ իրականացնելու նպատակով ընդգրկել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Լ.Դանիելյանին (խմբի ղեկավար) և գլխավոր մասնագետ Ա.Շահբազյանին:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ